ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 հունիսի 2013 թվականի N 658 - Ն

ԳՈՒՅՔ ՀԱՆՁՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 24-Ի N 675-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 4-րդ և Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի 3-րդ մասերը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ում է.

1. Երևան քաղաքի Հ. Աճառյան 31 հասցեում գտնվող՝ 6018.2 քառ. մետր ընդհանուր մակերեսով շենքային համալիրի սպասարկման համար առանձնացված՝ 2.65 հեկտար մակերեսով, 119 886 հազ. դրամ կադաստրային արժեքով հողամասն անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով հանձնել «Քենդլ» սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտ» հիմնադրամին:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում «Քենդլ» սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտ» հիմնադրամի հետ կնքել սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի անհատույց օգտագործման մասին պայմանագիր:

3. Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի մայիսի 24-ի «Քենդլ» սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտ» հիմնադրամ հիմնադրելու մասին» N 675-Ն որոշման N 1 հավելվածում կատարել հետևյալ լրացումները՝

1) 54-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 7.1-ին ենթակետով.

«7.1. հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի պատվավոր նախագահի ընտրությունը».

2) հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 55.1-ին կետով.

«55.1. Հոգաբարձուների խորհուրդն ընտրում է հոգաբարձուների խորհրդի պատվավոր նախագահին, որը չի հանդիսանում հոգաբարձուների խորհրդի անդամ և հոգաբարձուների խորհրդի նիստերին մասնակցում է խորհրդակցական ձայնի իրավունքով:»:

4. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահին՝ մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով ապահովել «Քենդլ» սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտ» հիմնադրամի կանոնադրության մեջ սույն որոշմամբ կատարված փոփոխությունների պետական գրանցումը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

2013 թ. հունիսի 26
Երևան